CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

Հուլիսի 10, 2025

Ժամանակակից ու ներգրավող ուսումնական նյութեր. ՔՈԱՖ-ի դասագրքերը վերափոխում են անգլերենի ուսուցման մոտեցումը Հայաստանի դպրոցներում

ԵՐԵՎԱՆ — Երկրորդ տարին անընդմեջ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ)-ի մշակած անգլերենի դասագրքերը հաղթող են ճանաչվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտարարած բաց մրցույթում: Հաղթելով՝ դրանք երաշխավորվել են նախարարության կողմից և 2025-2026 թթ. ուսումնական տարվանից սկսած կկիրառվեն Հայաստանի հանրակրթական դպրոցներում:

ՔՈԱՖ-ի 4-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների անգլերենի դասագրքերը գալիս են լրացնելու 2023 թվականին հիմնադրամի կողմից մշակված 3-րդ, 6-րդ և 8-րդ դասարանների դասագրքերի շարքը: 2025 թ.-ի հունիսի տվյալներով մեր դասագրքերը կիրառվում են հանրապետության 600-ից ավելի հանրակրթական դպրոցներում:

Դասագրքերի հիմքում ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցությամբ իրականացված ծրագրի շրջանակներում ստեղծված բովանդակային նյութն է, որը երկու տարի անցել է բազմափուլ փորձարկում ու որակի բարելավում:

«Այս հաղթանակը մեզ համար պարզապես հաջողություն չէ, այն պարտավորություն է՝ շարունակելու կրթության որակի բարելավման մեր ջանքերը համակարգային մակարդակով: ՔՈԱՖ-ի մշակած դասագրքերում լեզվի ուսուցումը զուգորդվում է կարևորագույն հմտությունների ձևավորմամբ՝ վերլուծական մտածողություն, արդյունավետ հաղորդակցություն, թիմային աշխատանք և հետազոտական կարողություններ: Սրանք գործիքներ են, որոնցով սովորողը կարող է լավագույնս դրսևորել իրեն 21-րդ դարում: Մեզ շատ է ոգեւորում այն փաստը, որ մեր ստեղծած դասագրքերը դառնում են փոփոխության շարժիչ ուժ՝ կրթությունը դարձնելով ավելի գրավիչ, գործնական ու հեռանկարային»,-նշում է ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

Դասագրքերի մշակման գործընթացում հատկապես կարեւորվել է ուսուցիչների ներգրավվածությունը: Նրանց երկարամյա փորձը և խորքային պատկերացումը՝ թե՛ կրթական համակարգի եւ թե՛ սովորողների կարիքների վերաբերյալ, հնարավորություն են տվել համադրելու արդի միջազգային մեթոդաբանությունն ու տեղական կրթական իրականությունը: Բոլոր դասագրքերում, ի դեպ, առանձնահատուկ կերպով ընդգծված են մշակույթն ու ազգային արժեքները, որոնց զուգահեռ կարեւորվում է նաեւ բազմազգ միջավայրում ապրելու և սովորելու բնականությունը: Հենց այս փոխկապակցված մոտեցումն է հիմք դարձել գործնական, ներգրավող և բովանդակային հարուստ ուսումնական նյութերի ստեղծման համար:

Այսպիսով, ՔՈԱՖ-ը հանրակրթական դպրոցներում ներդնում է անգլերենիի դասավանդման նորարարական մոտեցումներ՝ սովորողի համար ստեղծելով լայն մտածելու, զարգանալու և նախաձեռնող լինելու նոր հնարավորություններ:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական-հոգեբանական բարեկեցությունը և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության և մարքեթինգի բաժնի ղեկավար
Մարկ Գարգարյան
Էլ. հասցե՝ mark.gargarian@coaf.org